


ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՑԱՐՈՒԹԻՒՆ ԱԼՓԻԱՐ

Նամակ կամ ուր եւ Գրութիւն
պէտք է ուղղել առ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼԵՍԲՐԵ
Պապար Մուրուր, ԳԱՅԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ի Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրագրութիւն համար 80
» » վեցամսեայ » 50
Օտար երկիրներ տարեկան ծախս 25
» » վեցամսեայ » 14
Թղթատարի ծախսը խմբագրութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԱՆԳԱՍ ՄԸ ԵՒՍ

Անգամ մը եւս Եգիպտոսի ազգային պաշ-
տօնական մարմիններուն — Առաջնորդական
Տեղապահէն սկսելով — ուշադրութիւնը կը
հրաւիրենք Հայաստանի որբերուն ընծայուե-
լիք պաշտպանութեան գործին վրայ . Իզմիր,
Էստրինէ, Ռոստոմօ, Կեսարիա ու ասոնց բազ-
մաթիւք երկրորդական նկատուող շատ մը
գաւառային քաղաքներ իսկ դրամ հաւաքե-
ցին, որբեր որդեգրեցին ու կործակեցին հե-
տըզհետէ : Ի՞նչ ըրին Գահիրէ ու Ալեքսանդ-
րիա : Իրաւ է թէ այստեղի «Որբերու Խնա-
մատար Յանձնաժողովին» առաջին եւանդը
մարեցաւ Պատրիարքարանի անակնկալ պա-
տասխանին վրայ, որ կառավարկէր կեդրոնը
զրկել հաւաքուելիք դրամը՝ փոխանակ որբեր
ուզելու գործ իր յարմար դատած եղանակով
պիտի ինքնամէր ու գաւառարակէր . բայց ան-
կից յետոյ բանակցութիւններ կատարուեցան
անշուշտ Պատրիարքարանի հետ . Ի՞նչ եղաւ
արդիւնքը, ի՞նչ համաձայնութեան յանգեցան :

Հանրային օգտակար գործ մը ստանձնե-
ուած ատեն՝ արժանիքը կը կայանայ ներկա-
յացած դժուարութեանց յաղթելուն ու յա-
րատեւութեան մէջ : Յանձնաժողովի անգամ-
ները գիտենք որ ունին այդ յարատեւութեան
ոգին ու դիւրաւ չի տկարանալու առաքինու-
թիւնը . Ի՞նչ է ուրեմն պատճառը որ այս է-
տպէս մարդասիրական ձեռնարկութիւնը կի-
սատ մնացու գրեթէ մոռցուեցաւ : Նախ կարծիք-
ներու անհամաձայնութիւնը . ո՞ր և ի՞նչպէս
պիտի դատարարակուին տղաքները, եթէ երբեք
ճամբայ հանուին Կ. Պոլսէն . Եգիպտոսի՞ մէջ,
Կիպրոսի՞ թէ եւրոպական քաղաք մը : Ուշ կամ
կանուխ, այս կէտին վրայ կարելի է համա-
խոհութիւն գոյացնել սակայն : Յետոյ կուգայ
հանգանակութեան մասնակցելու դժկամա-
կութիւնը ունեւոր հայերուն կողմէ . կը յիշեք
անշուշտ թէ, հակառակ Յանձնաժողովի ան-
դամներու դիմումներուն ու խնդրանքներուն,
ո՛չ իսկ տարեկան հարկը ոսկիի հասաւ ստու-
րագրուած գումարը, անոր ալ մեծագոյն մա-
սը իրենք՝ անդամները՝ ստորագրուելով : Իսկ
Ալեքսանդրիոյ ազգայինները բոլորովին ձե-
ռնակալ մնացին . իրաւասութեան, ձեռնհա-
սութեան և մինչեւ իսկ արժանապատուու-
թեան խնդիրներ յարուցուեցան :

Այս բոլոր պատճառները կրնան բարձուիլ

մէկ անգամէն, ու ամբողջ Եգիպտոսի հայու-
թիւնը կարելի ըլլաւ մը ունենալու կոչուիլ
որքանիւսմ գործին մէջ, եթէ միասիրտ և միա-
հոգի աշխատելու կամքը չի պակսի ու անձնա-
կան նկատուածներ, ձեռակերպութեան բժա-
խնդրութիւններ մէկ կողմ թողուին : Որբերու
խնդիրը ո՛չ դպրոցի խնդիր է, ո՛չ թաղականի
վէճ ու ո՛չ ալ ազգային տուրքի հաստատութեան :
Անոր նուիրականութեան առջեւ՝ միակ ներշնչ-
չում մը, միակ փափագ մը ու պարտականութիւն
մը պէտք է ունենանք . քան-եքստեն տղայ
մը գոնէ ազատել այն թշուառ ու լքուած
վիճակէն ուր կը գտնուին հազարաւորներ .
ո՞րը իր բնագաւառէն մեկնած՝ կէս-ճամբան
կը սպասէ դրամի որ կարենայ շարունակել
ուղեւորութիւնը մինչեւ Պոլիս . ուրիշներ՝ Հի-
ւանդանոցի ապականուած միջնորդութիւն
մէջ կը հիւժին ու կը մնան անստոյգ : Արիւնտ
սրտով ու սգաւոր դէմքով, բայց առողջ սե-
րունդ մըն է այդ որ խամրելու, կորսուելու
վտանգին եզրը կը գտնուի Եգիպտոսի Առաջ-
նորդարանը, Յանձնաժողովը ու հայութիւնը
դիւր ժամանակ ունին անոնց ձեռք կարկառե-
լու . վաղը գուցէ ուշ ըլլայ :

ՍՈՆԶՊԵՐԻԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Անգլիոյ ներքին գործոց նախար-
արը՝ Պ. Աքրիթ, որ կը մասնակցէր Բոլզէրիի
գահիճին, այս օրերս ի Գիլմէնթօք գումարուած
ազատական միթինկի մը մէջ ճառ մը արտա-
սանելով ըսաւ թէ եւրոպական խնդիրներու
կարգադրութեան մէջ Մեծն-Բրիտանիոյ դերը
շատ աննշան եղած է վերջին տասնութ տ-
միսներու միջոցին : Ատենաբանն յարեց թէ
ինք չի մեղադրեր Լորտ Սոլզբերիին թէ իր բո-
լոր ջանքը չէ ըրած Թուրքիոյ մէջ իրաց կա-
ցութիւնը բարուրեցու համար . բայց կը մեղա-
դրէ նախարարակալութեան թէ խիստ թոյլ գտնե-
ուած է . վստահի՝ Հայաստան շատ աւելի փա-
փուկ կացութեան մը մէջ կը գտնուի այսօր
քան պատերազմէն առաջ . Կրէտէի մէջ ա-
նիշխանութիւն կը տիրէ և ինքնօրինու-
թիւն ըսուածը ունայն բառ մըն է : Պէտք է
սակայն խոստովանիլ թէ, կըսէ, եւրոպական
համաձայնութիւնը ընդդիմացաւ որ հաշտու-
թեան պայմանները շատ խիստ չըլլան :

Ատենաբանը կը հարցունէ թէ ի՞նչ կը-
նէր Անգլիա այդ միջոցին : Ան ատեն միայն

կենդանութեան նշան տուաւ, երբ կրէտէի
պաշարման խնդիրը ծագեցաւ : Եւ սակայն
շատ գեղեցիկ դեր մը կրնար կատարել Մեծն-
Բրիտանիա՝ եթէ իշխանութեան գլուխ գըտ-
նուած ըլլար կարող և ազգու անձնաւորու-
թիւն մը :

ԲԱՑ ՊԱՏԱՍԻԱՆ

Ա. Պ. Բ. Ի.

Ի ՊՐԱԽԼԱ

Մեր բաժնեգիրը . . . մարտած ըլլալուդ գոյժը
մեզ բերաւ ձեր 11/23 սեպտեմբեր թուակիր նա-
մակնիդ, նամակ մը զոր փութաց մեզ հասցնել «Դիւ-
րազգած ուներու ընկերութեան Ալեքսանդրիանակ
մէջ միջոցաւ որ իր հակափորձան տournée
վերջացուց Լոյտի Պոնեմիա շոգենաւին մէջ :

Հայ խմբագիրներն ընդհանրապէս վարժուած
են ձեզի պէս delicat բաժանորդներու արարքին,
հետեւաբար կարեւորութիւն ունենալէ գուրկէ ձեր
à l'oeil բաժանորդագրութեան եղանակը :

Ինչ որ զմեզ շատ խնդացնել կուտայ, ձեր նա-
մակին ոճը ու պարունակութիւնն է : Ձեր երրորդէ
մը ներշնչուած այդ նամակը մաքսի բեռնակիր մը
չպիտի ուզէր գրել ատանկ կոչաւ, ատանկ գուհիկ և
հայհոյակց տողերու տակ իր ստորագրութիւնը
դնելու հարկին մէջ չի գտնուելու համար :

Տասնութ շոգենաւային ընկերութեան ներկա-
յացուցիչ եղող մէկէն քիչ մը աւելի խելք կապա-
սէինք . — բարեկրթութիւն չըսելու համար :

Որքան ուրիշ էք եղեր, պարտն :

Հոս մեզի հետ անձնական հակառակութիւն ու-
նեցող մը՝ որ կարծես բարեկամ մը տեսնելէ ա-
ւելի Փարոսի և անոր համակրողներուն դէմ pro-
pagande մը ընելու նպատակաւ ձեր կողմը կայ-
ցելէ, և դուք տղու մը միամտութեամբ կը հաւատար
անոր կեղծ ազգասիրութեան ու այդպիսի նամակ մը
մեզ գրելու չէք բաշտիր :

Եւ այդ անձանք ձեզ ալ վիրաւորեր է եղեր,
allons donc !

Ձարմանալին հոն է որ այդ վերքը մեր բաժ-
նեգիրը ուզած վայրկենին մտքերնիդ կուգայ : Մի-
անգամ ընդ միշտ համոզուեցէք, թէ լրագրական
աշխարհին մէջ ձեզի պէտքերու տրուեցող չեն անց-
նիր . թո՛ղ ասիկայ մեր խրատը ըլլայ ձեզի :

Միեւնոյն ատեն պէտք է յայտարարենք որ
եթէ դուք ձեր բարեկամին այցելութիւնը ընդունած
չըլլայիք, թերեւս նորէն կլէիք մեր բաժնեգիրը,
բայց գոնէ ձեր կեղծ դիւրազգածութիւնը մեզի կը-
լեցնել տալու ջանքեր չպիտի ընէիք :

Դարձեալ չենք մեղադրեր ձեզ, որովհետեւ
շատոնց գիտենք թէ asinus asinum fricat :

ԱՅԺՄԷՈՒԹԻՒՆ

Աղեփասնորիս ոգեւորութեան մէջ է, մասնաւոր աւելցիւցիւններ: Վաղն առաւօտ այդ նաւահանգիստը կը հասնին Միջերկրականի անգղիական նաւաստիներէն հիւնց մարտնչներ, Ֆէլքս, Բէլքըրաւուն, Պարֆլէօր, Բէլպըրթէն եւ Տրայստ: Աւելի ստուար պիսի ըրար այս գրահապատ այցելուններուն քիւր, եթէ ընդհանուր հրահանգար՝ ծովակալ Սոր ձոն Հօքսինս Եւրոպա չի գրեւորէր հիւանդութեան պատճառով. իրեն կը փոխանորդէր դեր-ծովակալ Հարրիս:

Նաւաստի մը այցելութիւնը ամեն ժամանակ կարեւոր դեպք մը եղած է ծովագետայ փառքներու համար. ժողովուրդը կը հետաքրքրուի, վաճառատները կը շահին. փառքական նշանակութիւն մը եթէ չունենայ իսկ, գոնէ ծովային ուժի ցուցադրութիւն մըն է որ կը պարգտի:

Աղեփասնորիս անգղիական ցաղափայտութիւնը, հիւպատոսին նախաձեռնութեամբ, ստորագրութիւն բացած է իր մէջ ու կարեւոր գումար մը կը հանգանակէ՝ պարահանդես մը տալու համար նաւաստիի սպաներուն ի պատիւ. նաւագնէրուն ալ խրախճանքներ առիթներ պիտի ընծայուին:

Աղեփասնորիս ընկերները առիթ պիտի ունենան երթալ այցելելու այդ վիթխարի մարտնչներուն ու մօտէն սփնջանալու նաւային ճարտարութեան շինութեանց կատարելագործութիւններուն վրայ:

Յամաֆի վրայ, այդպէս հետաքրքրական երեւոյթ մը ընծայեց եգիպտոսի ժողովուրդին համար՝ Սկոփսական (Հայկանաւր) գորագունդին ժամանումը: Հիւնգարքի առաւօտ, արշաղոյսին, գեղջկական միջավայրի մը պատկերովն արթնցան Գահիրէցիները, իրենց պատահականներուն տակէն ընկնելով արիւնցի ու սկոնքի (cornemuse) նուագածութիւն մը, մեղմ ու ներդաշնակ, որուն կրկնութեամբ նորեկ գիւնուրներուն խորիս փայլածքը: Ու հիմակ, Գահիրէի փողոցներուն մէջ, հրապարակներուն վրայ, դեմքերու եւ հագուստներու հագարումէկ պէսպիսութեան վրայ կաշկանդ սկոփսացի գիւնուրներուն ինքնատիւ երեւոյթը ու ընդհանրական տարազը որ Մեծ-Բրիտանիոյ պատմութեան հին էջերը կը կենդանացունէ կարծես: Ինչ որ ամենէն աւելի միտքը կը գրաւէ այս առիթով, ազգային աւանդութիւններու եւ բարձրագոյն պահպանման խղճամիտ հոգածութիւնն է զոր ունին Անգլիացիները, աշխարհի ամենէն յառաջադէմ ազգը ըլլալով հարդերձ, — երկու առաւելութիւններ զորս գիտցած են գործընթաց պահել:

Վ Ր Ի Պ Ա Կ

Մեր նախորդ թիւի Այժմութեան մէջ յիշած էինք թէ Օրմանեան Պատրիարքը նոր խնդրագիր մը կը ներկայացնէ պալատ, հինգ կէտերու վրայ ուղարկութիւն հրապարակելու: Ատոնցմէ չորսը միայն տարած էին ու տարագրական սխալով մը մոռցուած էր հինգերորդը որ պիտի ըլլայ «Պուլկարիս ապստամբութեան դէմ հալածանքը դադարեցնելը»:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Թեոփիլոս օսմ. բանակին սպաները որոնք արձակուողք էին Պոլիս կը գտնուէին, յանկարծ հրաման ստացելու հետ իրենց զօրաբանակները վերադառնալու ու յատուկ փոխադրանքով մը ճամբայ ելելու են:

—Վիէննայի Բոլիքիշէ Բօրեսպոլիսէնձը կիմանայ Կ. Պոլսէ թէ Դուռը կը շարունակէ գրեթէ ամեն օր մէյմէկ զեկուցագիր պրկել գեղարարներուն՝ կրեմէի մէջ պատահած միջադէպներու վրայ և գանգաւտ յայտնել: Արդէն քանիցս բողոքած է ծովակալներուն կողմէ կողմին մէջ գաղտնի միջադէպին յանձնաժողովի մը հաստատման դէմ: Դրան այս ընթացքէն կը տեսնուի թէ ինչ կարեւորութիւն կը ծայէ կրեմէական խնդրին անմիջական լուծման՝ խնդրական բաղձանքներուն համաձայն:

Հանեայէն կը հեռագրեն թէ օտարականութիւնն ու խաղաղի հրապանակները վախտական շարագործ մը հալածած ատենին կիմանան որ դեր-կառավարիչ Իսմայիլ պէյի բնակարանն ապստամբներ է: Չարագործը տեսնելով որ օձիքը ձեռք պիտի տայ, կերթայ անձնատուր ըլլալ: Իսմայիլ պէյի սպանորդներէն մէկը կընկերանար իրեն:

Նէրօքուլօյի մէջ պատահած գէպքերուն հետեւեալք, Գարաաղլի քառասուն ժանտարմաներ Բէթիմօէն հոն հասելու են՝ զինուորական շղթան զօրացնելու համար: Ապրտամբներուն պետը ցաւ յայտնել է ռուս զինուորներուն հետ պատահած կռուին առթիւ որո միջոցին երկու ապստամբ վիրաւորուած էին:

—Կը յիշուի թէ Բիրէի նաւահանգիստին մէջ խումբ մը կրեմէցի յոյներ աւատրիական Մառի-Թէրեզա շրջանաւր խումբ մէկ իրենց ազգակից գերիներ փնտռելու համար: Այս միջադէպին առթիւ, Աթէնքի աւատրիական գեղական Պ. Փօն Պիւրիան հրաման պրկել է Ֆրանկ-Յօսէփ մարտնչներուն, որ այն նաւահանգիստը կը գտնուի, ի հարկին բռնութեամբ արտաքսել տալ այդ գէպքին հեղինակները: Միեւնոյն ատեն, խնդրեց նախաւարապետ Պ. Չայիմիսէն որ ազգուսպէս միջամտէ: Յիշեալ անձինք արտաքսուելու են ծովային հերէն զօրաց միջոցաւ: Ատիկցի զատ, Բիրէի նաւահանգիստի հրամանատարն ու տնտիկանութեան տեսուչը պաշտօնանկ եղել են: Աւատրիա կը շարունայ իրեն տրուած այս գահացումէն:

—Տէյիի Նիսի Աթէնքի թղթակիցը կը հեռագրէ թէ Յունաստանի պատերազմական նոր նախարարը որոշել է իրենց տեղերը վերադարձնել ցամաքային զօրաց երկու կարգերը ինչպէս նաեւ ծովային բոլոր պահեստի զինուորները: Թօրփիլակիներու նաւախումբը հըրաման ստացել է Բիրէ վերադառնալ:

—Աթէնքի Էմիլիէրիս լրագիրը որ ասկից առաջ կարգ մը յօդուածներ հրատարակած էր պալանիական շարժումին վրայ՝ ինքնօրինութիւն մը ձեռք անցունելու նպատակով, նորագոյն տեղեկութիւններ կուտայ այդ մասին: Ալպանիոյ մէջ գօմիթէներ կազմուել են եղեր «ինքնօրէն Ալպանիա»ի մը կազմութեան

համար. կերեւայ թէ այս շարժում մտահոգութիւն պատճառող կերպարանք մը առած է, վանդի Դուռը խիստ միջոցներ հրամայել է: Նահանգին կառավարիչները հրահանգ ատացել են մօտէն հսկել գօմիթէի տեղացի կամ օտար անգամներուն երթեւեկին վրայ, խստիւ արգելել Խալիլի մէջ նոր հրատարակուող լրագրի մը Սփիքէրիս (Ալպանիա) մուտքը և զինուորական կայանները զօրացնել այն վայրերու մէջ ուր կը վախցուի թէ ալպանիացիները ոռքի ելլեն:

—Երէկուան Բոսփորէի մէջ կը կարդանք. «Մարտիի գաւառէն Լոնտոնի թերթերուն ուղղուած նամակներու նայելով, երեսունէ աւելի քրիստոնեաներ սպաննուած են այդ գաւառին մէջ, վերջին սպանմանը ամսուան միջոցին: Այս սպանութիւնները կը վերաբոլին զինուորներուն որոնք ո՛չ սնունդ կը ստանան ո՛չ ռոճիկ: Չինուորական հրամանատարը խնդրել է որ ետ կանչուի, եթէ իրեն չի խրկուի պէտք եղած դամարը՝ իր մարդոց անկարգադասութիւնը զսպել կարենալու համար»:

—Աթէնքէն կը հեռագրեն թէ հաշտութեան փորձական պարմանագրին վրայ բանակցելու պաշտօն ունեցող պատուիրակները այս հինգշաբթի ճամբայ ելելու են դէպ ի Կ. Պոլիս:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Առաջնորդական Տեղապահ Տ. Յակոբ Ծ. վարդապետ Այստ այսօր Բարձր. Խտիվին կը ներկայանայ Բաւէլ-Թիւի պալատը, անձամբ յանձնելու համար իր պաշտօնին վաւերացման եպարքոսական գիրը որ զրկուած էր Ազգ. Պատրիարքարանի միջոցաւ:

Վաղն առաւօտ Աղեքսանդրիա հասնող աւատրիական Լոյսի շրջանաւր կը վերադառնայ Տիգրան փաշա: Ն. վանութիւն՝ Անգլիոյ Թագուհոյն յորէյեանի հանդէսներուն ներկայ գտնուելէ ետք, ամբար եղանակն անցուցած էր ի Զուիցէրիա:

ԸՆԹԵՐՑԱՍԻՐԱՅ ԼՍԱՐԱՆԸ

Այս գիշեր, ժամը 9ին տեղի կունենայ Ընթերցարանը ընկերութեան Գ. լսարանը: Ասեմաբանն է Տիար Սմբատ Բիւրատ, ճիւղ ունենալով «Կիլիկիոյ անցեալն ու ներկան»:

Երեք երաժշտիկ պարուներ՝ Տեառն Տ. Սանթրի (դաշնակ), Բեկմաֆի (շուրակ) եւ Պ. Ճամբեան (երգ) իրենց սիրայօժար մասնակցութիւնը նուիրած են կազմակերպելով երաժշտական մասը որ, ինչպէս կը տեսնուի, գուրկ չէ շահեկանութեան:

Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր

Վահէր, Մարտ, Տ. Տ. Սանթրի, Բեկմաֆի եւ Շ. Մարտանի, Քալապիւրիա Նոյն Ս. Ս. Բիւրատ, Ասեմալսուրիւն, մասն Ա. Սանթրի, Մազուրա, դաշնակ շուրակ եւ սրինգ Օտրան, Մաւօթ սուօ, Տ. Տ. Ճամբեան եւ Բեկմաֆի

Դ Ա Դ Ա Ր

Սիւլէսի, Սեքեմ, Տ. Տ. Սանթրի եւ Բեկմաֆի Տ. Ս. Բիւրատ, Ասեմալսուրիւն, մասն Բ. Մարտանի, Քալապիւրիա (երկիւս) Տ. Սանթրի Վէրտի Այսա (նովան) Տ. Ճամբեան Պէլլէնի, Ուն բուրօ սեքիմեքօ, Սանթրի եւ Բեկմաֆի

ԳՐԶԻ ՔՄԱՅԱՃՈՅՔ

ՌԱՄՍԵՍ ԱՌ ՕՍԻՐԻՍ

Ի պատասխանի քու «Թաշկինակ»-ի վրայ գրած նամակիդ, ներքե՛ր որ ես ալ ծխախոտին վրայ խօսում քեզի՛ն Գու Նիւթիդ քիմին վրայէն կանցնէր, խակիմըս՝ տակէն ։

Դուն ալ ինծի պէս սիրահար մըն ես Նիւթի գիւտին և անուղղայ սպառող մը Մաթոսեան սիւ կառէթներու Բայց գիտե՞ս, սիրելիս, կամ թէ ի մայե՞ր էիր թէ ծխախոտը . . . ոճրագործութեան կը տանի։

Եւ սակայն ըսածս ոչ գուարճալիք մըն է, ոչ ալ յերկրորդութիւն ի ֆիւսս Չանարլիսի և կամ Մէլաւրիսի։

«Ծխախոտի գործածման դէմ» ընկերութեան նախագահը, Պ. Տըքրուա, հաշիւներ և վիճակացոյցներ ի ձեռին նոյն ընկերութեան մէկ նիստին մէջ այդ խարտեաչ րոյսին անբարոյացուցիչ գերին վրայ երկար ճառ մը կարդացած է անցեալ շաբաթ ի Բարիզ, ինչ որ ահագին տպաւորութիւն ըրած է Ժողովականներուն վրայ ։

Պ. Տըքրուաի հաշուով՝ մեր թոռները զիրար պիտի ջարդեն ծխախոտի շնորհիւ։

Բարեկամ, կամ մենք բան չենք հասկնար և կամ գիտութիւնը պարզապէս խեղճիւն անպարտութիւնն է։

Ոգեւելիք ըմպելիներու պէս ծխախոտն ալ մարդս գող, աւագակ, մարդասպան կընէ՝ եղբր։ Ի՜նչ այլանդակութիւն ։

Օրը հարիւր սիկառէթ ծխողներ կը ճանչնամ որոնք Աւետարանիչի մը պէս խելօք և ուշադրի մը պէս բարի են։ Ես ինքս ալ օրը միջին հաշուով երեւ տուն գլանիկ կոչնչացնեմ՝ և սակայն երբէք մտքէս չէ անցած մէկու մը թշնամութիւն ընելը ի բաց առեալ գրպանէս ։

Միմիայն խղճի խայթ մը ունիմ . . . այն է թէ ծխելովս երբեմն կսպաննեմ . . . Ժամանակս, յանցանք մը որուն վրայ օրէնսդիրները երբէք չեն մտածած ։

Հապա կ'ընե՞րը, Օսիրիս, անոնք կամայ կամայ մենէ աւելի ծխելու տրամադրութիւններ կը ցուցունեն և սակայն անոնք ալ ատոր համար մարդ սպաննած չունին . աչքերով ըրած ոճիրներնին այս հաշուոյն մէջ չեն ։

Եթէ Պ. Տըքրուայի ըսածը շիտակ ըլլար, Նաթալի թագուհին որ օրը 25 սիկառէթ կը ծխէ, պարզապէս չըլնազեցնող թորոման մը պիտի եղած ըլլար և Խաւերի Մարկիթ թագուհին յսրոնով Բրանձինի մը, որովհետեւ այդ վերջինն ալ 24 ժամուան մէջ 40 սիկառէթ ծխելու սովորութիւն ունի։

Չարուհին՝ Ֆրանսուա Քօրի և կամ՝ Նուպար փաշայի չափ սիկառէթ կը սպառէ, օրը 60 հատ տա նուազն ։

Բօրթուկալի թագուհին ծխախոտը կը պաշտէ և Ռուսանիանը կը խենդենայ եգիպտական ոսկառէթներու համար ։

Չանց կընեմ յիշել այն արեւելքայի իշխանուհինը որոնք անհամար սիկառէթներ կը ծխեն օրն ի բուն։ Բայց օր մը իսպաղած ես որ այդ թագուհինը ինչ կամ իշխանուհիներէն մին ոճիր մը գործած ըլլայ Սամսոնի կամ Եփեմէի ապրանքները սպառած ըլլալուն համար ։

Պ. Տըքրուայի նախագահած ընկերութիւնը, տարակոյս չկայ, կը ջանայ մէջտեղէն վերցնել այն ամեն չարիքները որոնց զոհ կերթայ մարդկութիւնը և իր այս գործը ծխախոտէն կակսի . . . կիներով վերջացնելու համար, կիները որոնք ամեն մեծ թշնամիներն են խեղճիկ մարդկութեան ։ Ասոր ապացոյցը հոն է որ երբէք ոճիրի մը առթիւ չաւազործին գործածած ծխախոտը չեն փնտռեր, այլ հասարակ կիներ որուն հետ գործ ունեցած է։ Ուստի հանգիստ կերպով ծխելը շարունակէ՛, մարդիկ ծխած են միշտ, կը ծխեն ու պիտի ծխեն յաւիտեան ։

Սերք ծխախոտէն աւելի՝ կնկան Գաբիւրէին վախցիր, և ես կերաշխարհորեմ որ այսպէս հարկը տարի կընաս ապրիլ խաղաղ և երջանիկ ։

ՌԱՄՍԵՍ

ՏԵՂԱԿԱՆ

Ելմտական նախարարութիւնը 2000 ոսկի վարկ մը բացած է Ապտինի պալատին նորոգութեան համար, Սիամի թագաւորին ընդունելութեան առթիւ ։

—Պարօտայի հնդիկ իշխանը երէկ իրիկուն Աղեքսանդրիա ուղեւորեցաւ, այսօր Բարձր Խտիվին ներկայանալու համար ։

—Աղեքսանդրիոյ իտալական հիւպատոսարանը նախընթաց օր ճամբայ հանեց Սալվաթօրէ անուն անձը որ Աթթարին փողոցին մէջ պէրպէտի մը սպաննած էր դանակով ։ Սալվաթօրէ պիտի դատուի Անքօնաի եղեռնական ատենին առջեւ ։

—Փէյուսի մէջ կատարուած բժշկական քննութեամբ հաստատուած է որ այնտեղ ճարակող տենդին սկզբնապատճառն է ճահճային ջուրերուն գործածութիւնը ։

—Ձակադիկի մէջ գումարուած կարգապահական ատենան՝ տեղւոյն ոստիկանութեան մուտքով զատապարտեր է . . . յանդիմանութեան, օգոստ. 19/31-ի գիշերուան անկարգութիւններու պահուն բռնած թոյլ ընթացքին համար ։

—Իվիթ Կիւպէր յառաջիկայ յունուարին Եգիպտոս պիտի այցելէ ։ Բարիդեան հոշակաւոր երգչուհին Աղեքսանդրիոյ Զիզինիա թատրոնին մէջ քանի մը երեկոյթ տալէ ետք, Գահիրէ պիտի գայ զբօսական պտոյտ մը կատարելու ։

—Սեպտեմբեր 24էն 30 Գահիրէի մէջ պատահած է 324 մահ և 369 ծնունդ ։ Աղեքսանդրիոյ մէջ 220 մահ և 195 ծնունդ ։

—Բուէտի Փոնսիէի երեկի (Հոկտ. 15) վիճակահանութեան առաջին պարզեւր 100,000 ֆրանք, շահած է 393,946 թիւը ։

Հետեւեալ թիւերը շահած են 1000 աւան ֆրանք,

7,228.	8,393.	17,803.	33,661.	37,380
38,684.	51,208.	87,598.	93,197.	121,677
151,268.	154,876.	163,023.	165,173.	174,696
230,613.	246,138.	289,094.	296,880.	332,207
351,040.	371,151.	374,718.	374,935.	393,471.

ՍԻԱՄԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷՆ

Սիամի թագաւորին գալատեան առթիւ՝ շահեկան կը գտնենք հետեւեալ քաղուածքներն այն նօթերէն, որոնք հրատարակուեցան Եւրոպական թերթերու մէջ ։

Ֆրանսական թերթերը կը պատմեն թէ ասիաց քանի մը տարի առաջ անգլիացի վաճառական մը Սիամ երթալով Շուլաթիկքօրնի ներկայանալու պատիւ ունեցաւ շնորհիւ խել մը ազդու յանձնարարութիւններու որոնք անգլիական արքունիքէն իրեն տրուած էին ։

Սիամի վեհապետը մասնաւոր պատիւ մը ընելու համար իր անգլիացի այցելուն, հրաւիրեց վայն պտոյտ մը ընել իր հարէմին մէջ ։

Թեւ թեւի մտած ամբողջ պալատը աչքէ անցուցին, սանդուղի մը վրայ դեռատի կնկան մը հանդիպեցան որուն տարօրինակ գեղեցկութիւնը շուրջուց անգլիացիին աչքը ։

—Ահա՛ դեղանի կին մը, բացառունչել չի կըրնալ զսպի ինքզինքը թագաւորին հիւրը ։

Այդ հիացումի արտայայտումը հաղիւ արտասանուած էր, երբ Շուլաթիկքօրն աչքով նշան ըրաւ ներքինի մը որ իրենց կընկերանար ։

Այցելութիւնը վերջանայէն յետոյ, Սիամի վե-

հապետը մինչեւ սանդուղին զուլար ընկերայաւանգլիացիին և շատ մտերմական կերպով սեղմեց աւոր ձեռքը ։

Բայց մեծ եղաւ զարմանքը Ճօն Պուլի հայրենակցին, երբ դրան սեմին վրայ տեսաւ յաղթանդամ ներքինի մը որ ափսէի մը մէջ ներկայացուց իրեն . . . մարմնէն անջատեալ գլուխը այն կնոջ որ քիչ մը առաջ իր ուշադրութիւնը գրաւած էր ։

Այս պատմութեան կը հետեւան թէ յարքերը դեռ շատ վայրենի վիճակի մը մէջ կը գտնուին Շուլաթիկքօրնի երկիրներուն մէջ ։

* *

Սիամի վեհապետին Եւրոպիոյ մէջ ըրած ճամբորդութեան առթիւ շատեր խնդացին իր բաշխած պատուանշաններու առատութեանը վրայ ։

Սակայն այդ պատուանշանները բաղդատելով եւրոպական պատուանշաններու հետ, կարծուածէն աւելի արժէք ունին։ Սիամական խաչը, օրինակի համար, իրաւունք կուտայ վայն կրողին՝ Սիամի ամեն մէկ տունէն գալիսիւղ մը բրինձ և ձուկ մը պահանջել տարին անգամ մը ։

Նշանաւոր է նաեւ Մուրափիէֆ կոմսին տրուած պատուանշանը ։ Ռուսիոյ նախարարապետը ատով կրնայ Սիամի մէջ տալու միլիոն ֆրանք փոխ առնել . . . եթէ երբէք իրեն տուող ըլլայ ։

Ի՜նչ երանաւետ երկիր է եղեր Սիամ ։

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆՏՈՆ, 15 Հոկտ. — «Թայմզ» վիէննայէն հեռագիր մը կը հրատարակէ որ կըսէ թէ Պուլկարիոյ պատերազմական ծայրացեղ պատրաստութիւնները պատերազմասէր անդէպ ոգեւորութիւն մի առաջ կը բերեն ։

Պուլկարիոյ և Սերպիոյ միջեւ հակառակութիւնը՝ Սկիւպի վանքին սեփականութեան առթիւ՝ կացութիւնը կը դժուարացունէ ։

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

ՄԱՋԵՐԸ

Գիտնականին մէկը նոր գիւտ մը մէջտեղ հանած է որով կը հաստատուէ թէ մագներուն խտութիւնը իրենց գոյնէն կախում ունի ։ Խարտեաչ մագները, օրինակի համար շատ բարակ ըլլալուն, աւելի առատ են գլխու մը վրայ քան սեւ մագները ։

Մեր գիտնականը աւելի հեռուն տարած է իր խուզարկութիւնը ։

Շատ մը փորձերէ և շատ մը հաշիւներէ ետքը սա եզրակացութեան հասած է թէ խարտեաչ եղող մը գլխուն վրայ 143,006 թէլ մագ ունի . (վերջի 6 թիւը պարզապէս հիմնարկ է) թուի մը ունի 105000 մագի սեւ թէլեր, իսկ կարմիր մագ ունեցողները միայն 29,200 թէլ ունին ։

Գիտութիւնը՝ ըսելիք չկայ, շատ գեղեցիկ բան մըն է ։

ԹԷԼԷՑՈՆՎ ԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՆՔՆԵՐԸ

«Հեռագրով ամուսնութիւն» պատմութեան իբր շարունակութիւն, մեզ կը հաղորդուի հետեւեալ հետաքրքրական դէպքը ։

1885ին Ամերիկայի Ինտիմնուպոլիս քաղաքի արուարձաններէն սեւամորթ մը ծանօթ լրագրի մը մէջ յայտարարութիւն մը կընէ թէ հարուստ ճէնդլմէն մը իւր կինը կորսնցնելու դժբաղդութիւնը ունենալով այրի մնացած է երկու որբերով որոնց հոգատարութեան համար պէտք կը գայ համեստ, կըրթեալ, տանտիկին, գեղանի ու դեռատի կնոջ մը՝ իբր ամուսին ։

Այրի կին մը, որ հակառակ իւր աննկուն աշխատութեան, միշտ կը տառապէր նիւթական ծայրացեղ անձկութեամբ, իւր անտանելի վիճակէն զգուած և հրապուրուելով կեղծ «հարուստ ճէնդլմէնի» յայտարարութենէն, իսկոյն մէկդի կը նետէ թերթն ու գործը և կը դիմէ գրչի ու մեղանի պատասխանելու այդ բարեբաստիկ յայտարարու-

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷՔՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱԶՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Բ Է

Գնում և վաճառում արժեթուղթերու...
Կանխավճար արժեթուղթերու վրայ... Կատան...
ձնէ յաճախորդներու հաշոյն համար գան...
ձումներ ընել եգիպտոսի և արտասահմանի
գլխաւոր քաղաքներու մէջ... Պայմանաժամա...
ւոր վաճառում ամեն տեսակ պարգեւաւոր
արժեթուղթերու, օրինաւոր պայմաններով։
Սակի մանրամասն տեղեկութեանց համար գի...
ւել Պուլաք փողոց եգիպտական հեռագրատան դէմ
Բէսսազօղլու դրամատունը։

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՑԱՐԱՐ

Էօզպէքիէ, հայկական պանդոկին քովըն...
տի կամարակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն զօւաւրահաճները զոհայնելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն սո...
վորական գիններով։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑ ԵՐԹԵՒԵՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԻ ԱՂԵՔՍԱՆՏՐՈՅ ԳԻԹ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1, 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
Գահիրէ	մեկ. 4 45	առտ.	7 —	առտ.	առտ.	Երեկ. 3 30	Երեկ. 4 45	Երեկ. 7 15	Երեկ. 11 —
Պէնհա	8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	մամ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	1 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	Երեկոյ 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Աղեքսանդրիւս	մամ. 6 25	9 15	10 45	2 30	Երեկոյ 1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆՏՐՈՅԻ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԹ

Կ Ա Ց Ա Ր Ա Ն Ք	Օմնիպ. 1,2,3 կգ.	Կէս ուղ. 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Խառն 1,2,3 կգ.	Օմնիպ. 1,2,3 կգ.	Էքսորէս 1 2 կգ.	Օմնիպիւս 1 2 3 կարգ	
Աղեքսանդրիւս	մեկ. —	7 —	7 15	9 —	առտ. 9 20	Երեկ. 2 30	Երեկ. 4 15	Երեկ. 6 15	Երեկ. 11 —
Տամանհուր	—	8 6	8 58	10 2	Երեկ. 12 14	4 13	5 15	8 6	առտ. 1 9
Թանթա	մամ. —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնհա	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գահիրէ	մամ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՁ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՁ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՈՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՈՏ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (բարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	մամ. 12 28	7 48	Կայարան	—	3 30
	մեկ. 12 33	7 53	Երեկոյ 1 20	7 5	
Զակազիկ	մամ. 1 34	8 54			
	մեկ. 1 44	9 4	Զակազիկ	մամ. 3 7	8 53
Խամադիւս	մեկ. 3 40	առտ. 1 —		մեկ. 3 17	9 3
Սիւէզ կայարան	մամ. —	5 —	Պէնհա	մամ. 4 13	9 47
Տօք (բարափ)	մամ. 6 55	—		մեկ. 4 17	9 4
			Գահիրէ	մամ. 5 5	10 35

Թեան, երազելով թէ իրեն համար կեանքի ու եր...
ջանկութեան նոր դուռ մը բացուած է։

Իր նամակի գողտրիկ ոճն որ կը յայտնէր զար...
գացեալ մտքի մը նշաններն և իւր լուսանկարն որ
յոյց կուտար սիրուն և գեղանի կնոջ մը դիմագիծը,
բոլորովին կը գրաւէին «ճէնգըլ մէն»ին սէրն ու խելքն։
Իւ որովհետեւ իրարմէ հեռու քաղաքներու մէջ կը
բնակէին, կարծեցեալ հարուստը վախճալով որ չըւ...
լայ թէ իւր գոյնն երեւան գայ, փոխանակ նամա...
կի՝ թէլէֆօնով կը սկսի բանակցիլ իր անձանօթ
պաշտօնեային հետ։

Թէլէֆօնով իրենց ունեցած առաջին տեսակ...
ցութեամբ երկու անձանօթ սիրահարները կորոշեն
խկոյն ամուսնանալ և առանց վայրկեանի մը կորսն...
ցունելու կը հրաւիրեն երէցներն և պաշտօնական
մարմինները՝ ամուսնութեան արարողութիւնը կա...
տարելու։ Հարսը թէլէֆօնի մէկ ծայրը կեցած՝ փե...
սան միւս ծայրը, իւր թէ քաղաք կը պսակուին թէլէ...
ֆօնի հաղորդակցութեամբ։ Արարողութենէն վերջ...
հարսն այնքան անհամբեր տեսնելու իր հարուստ
ամուսինն, իսկոյն ճամբայ կելնէ որոշեալ տեղն
հասնելու ու վայելելու մեղրալուսինը։


Փեսան պէտք եղած մէջոցները ձեռք կառնու...
նելով իր սեւութիւնը ծածկելու և կը զիմա...
ւորէ հարսն որոյ կը հանդիպի գիշերուան ժամը տաս...
նին կայարանին մէջ և առօր փառօր կը տանի իր
տունն ուր կանցընեն գիշերը։

Հետեւեալ առտուն կինն անկողնէն կելնէ և կը
տեսնէ որ իր ամուսինը սեւամորթ է եղբւ. կրնաք
երեւակայել յուսախտութիւնը. այս սոսկալի խա...
բէութենէն զայրացած, իսկոյն կը դիմէ դատարան և
ամուսնալուծութիւն կը պահանջէ ու կը յաջողի։

Ա Ձ Դ

Տիկին Էօթէնի Էրզուրումեան որ այժմ Գահի...
րէ հաստատուած է, պատիւ ունի ծանուցանել թէ
պատրաստ է դաւանակահարութեան դասեր տալ մաս...
նաւոր տուններու եւ վարժարաններու մէջ։

Դիմել փարոսի խմբագրատունը կամ Տ. Գաբ...
րիւլ Նեանեանի։ 2—6



ՃԵՐՄԱԿԵՂԷՆ ԵՒԱՅԼԵՆ ԼՈՒԱՆՈՒ ՀԱՍՏԱՐ
Գ Ո Ր Ծ Ս Ե Ե Ց Է Ք

ԼԵՍՍԻՎՏԻԻ ԺԵՆԻՆ

Ծախքի եւ ժամանակի խնայողու...
թիւն. — Մաքուրեան կատարելագոր...
ծուքին. — Արագուրիւն եւ դիւրութիւն. — ձեռնակե...
ղեններու եւ այլոց հակաճեխում։

ԿԱՐԵՒՈՐ. Լէսսիւի ժէննին 21 ՄԱՇԵՑՆԵՐ

Եւրոպոյ եւ Ամերիկայի մէջ 100,000,000 ֆլո...
սարեկան սպառում. — Գործածութեան կերպը խիստ
դիւրին՝ իւրաքանչիւր բաժնի վրայ կը գտնուի։

Միակ ներկայացուցիչ յեգիպտոս

Կ. Վ. ԵԿԱՒԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Գահիրէ. ՊԱՋԱՐ ՄՈՒՐՈՒՐ

Տ Պ Ա Ր Ա Ն

“ՓԱՐՈՍ” ԼՐԱԳՐԻ

ԿԸ Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Ի Ն

ԱՄԵՆ ԼԵՁՈՒԻ ԵՐԶԱՐԵՐԱԿԱՆ

ՄԱՀԱԶԴ, ՀՐԱԻՐԱԳԻՐ, ԱՅՅԱՔԱՐՏ

ՑԱՆԿԵՐ, ՏԵՂԵԿԱԳՐԵՐ

ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ, ՆԱՄԱԿԱԳՆՈՒԻ

Տ Ո Մ Ս Ե Ր

Եգիպտոսի որ և է քաղաքէ կամ գիւղէ եկած
յանձնարարութիւնները ամենայն խնամօք և փութով
կը կատարուին։

ՎԱՅՐԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Այցաւարներու եւ տնտեսներու

Տպարանը բաց է ամեն օր բացի կիրակի եւ
օգոստոսի, առաւօտեան ժամ 7էն երեկոյեան ժամ 7։

Le Gérant: D. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի